Միսաք Մեծարենց

Ցայգն է պայծառ...

Ցայգն է պայծառ անհունորեն
ցոլցլանքովն իր խոլապար.
օդանույշներ՝ որ մեղմաբար
քնքշանքով զիս կը պարուրեն:

Բուստ համբույրով՝ որուն կարմիր
կարոտովն իմ հոգիս կուլար,
ինչպես փանդիռ մը մեղմալար՝
պոնդերու տակ մեղկ ու ցանցիր:

Պարզկա ցայգուն անուրջին մեջ
լրվալ կ'ուզեմ հիմակ հոգիս,
և հրրահրել երբեմնի շեջ
աշտանակներն իմ երազիս:

Մրտածումրս կ'անցնի նորեն
շավիղներեն իր լուսավետ,
հեշտություններ հոգվույս հավետ
բերելով իր ճամբաներեն:

Գինո՜վ եմ ես ծաղկանց բույրեն,
տարաշխարհիկ ու գրրավիչ,
ու ձայներն ալ՝ որ քիչ քիչ

իմ երազներըս կ’օրորեն:

Եվ անծանոթ աշխարհներուն՝
անեզրին մեջ խորհրդազեղ՝
կ’անդրադառնա մեջն իմ հոգուն
կրկներևույթը գունագեղ:

Պիտի ըզգա՞մ ես տևաբար
բուրումն անոնց ծաղիկներուն,
որոնք հեշտին կը դառնան պար՝
լուսացնցուղ ցողով լեցուն:

Պիտի ծըծե՞մ ես անդադար
հոծ երազանքն անոնց բալին,
ու շողերն՝ որ կը փալփըլին՝
ոսկեպաղպաջ՝ ինչպես նեկտար:

Պիտի անցնի՞մ ես խանդավառ
այդ լուսոռոգ ուղիներեն,
ես՝ ուխտավոր ուղեմոլար՝
խորհրդածուփ թափառելեն:

Պիտի անցնի՞մ ես Անհունին
հավերժալուռ երկինքներեն,
մինչև հույզերս ամեն թոշնին՝
ու ես երկիր դառնամ նորեն: